

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՑ

ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

22.01.2016 թվականի թիվ 1

Լճափ համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Լճափ համայնքի 2016թ. բյուջեն՝

ա/ եկամուտների գծով 26425.5 հազ.դրամ

բ/ ծախսերի գծով 29140.2 հազ.դրամ

գ/ հավելուրդը կամ դիֆիցիտը /պակասուրդը/ 2714.7 հազ.դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման համաձայն հատված 2-ի

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 3-ի

5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դիֆիցիտը /պակասուրդը/ համաձայն հատված 4-ի

2016թ. պակասուրդը կազմում է 2714.7 հազ. դրամ

6. Հաստատել համայնքի բյուջեի դիֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի

2016թ. բյուջեի պակասուրդը ֆինանսավորվելու է վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից՝ 2664.2 հազ. դրամ, և ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից՝ 50.5 հազ. դրամ.

Ընդամենը՝ 2714.7 հազ. դրամ:

Քանի որ նախորդ տարում վարչական բյուջեի մասով պարտքային պարտավորություն չկա, ուստի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 2664.2 հազար դրամը ուղղել ֆոնդային մաս և ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդի / 50.5 հազար դրամի /հետ միասին /ընդամենը 2714.7 հազար դրամ/ ուղղել ֆոնդային մասի ծախսերի ֆինանսավորմանը;

ա/01 բաժնի 6 խմբի 1 դասի 5112 հոդվածի շենք. և շին. կառուցում 1964.7 հազար դրամ

բ/01 բաժնի 6 խմբի 1 դասի 5134 հոդվածի նախագծահետազոտական ծախսեր 150.0 հազար դրամ

գ/06 բաժնի 4 խմբի 1 դասի 5112 հոդվածի շենք. և շին. կառուցում 600.0 հազար դրամ

վարչական բյուջեյի պահուստային ֆոնդը սահմանել 1760.9 հազար դրամ:

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի.